ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ախտահանման – մակաբույծների ոչնչացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» փետրվարի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Ռուզաննա Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի արխիվային փաստաթղթերի պահպանման բաժնի արխիվի պետ

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (11.02.2022թ.)՝ ժամը 10:00-ն,

-հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

-էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 14.02.2022 թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	Ախտահանման – մակաբույծների ոչնչացման ծառայություններ	3 320 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ	ԵՐԵՎԱՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ 160

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/01» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
		Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ
1	Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ	3 300 000	0%	3 300 000	3 300 000	0%	3 300 000

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 14.02.2022թ.՝ ժամը 10:30-ին և Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- **Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ**-ին հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝

_____ Արթուր Ասատրյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Ռուզաննա Հարությունյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան